

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Հարգելի՛ գործընկեր,

2022 թվականի հունիսի 14-16-ը կանցկացվի «Սպորտ, առողջություն, կրթություն» խորագրով ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) համար **գիտաժողով՝ հետևյալ ուղղություններով՝**

1. Օլիմպիական սպորտ. օլիմպիզմը, օլիմպիական կրթությունը և ժառանգությունը ժամանակակից սպորտում
2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժական հիմնախնդիրները
3. Հոգեբանական մտքի զարգացումը սպորտային գործունեության համատեքստում
4. Սպորտային գործունեության և առողջ ապրելակերպի բժշկական-սաբանական հայեցակետերը
5. Ֆիզիկական վերականգնումը սպորտում
6. Ադապտիվ սպորտը ժամանակակից աշխարհում
7. Սպորտային տուրիզմի զարգացման հեռանկարները
8. Նորարարական տեխնոլոգիաները սպորտի կառավարման գործընթացում

Նյութերին ներկայացվող պահանջները

1.Վերևում՝ էջի կենտրոնում, մեծատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ թավ (bold),

1 ինտերվալ ներքև՝ հոդվածի հեղինակի ֆակուլտետը, ամբիոնը, կուրսը, անունը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold),

1 ինտերվալ ներքև՝ գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold),

առանձին պարբերությամբ նշվում են նյութի առանցքային բառերը և բառակապակցությունները (5-8 բառ), մեկ ինտերվալ ներքև՝ բուն տեքստը:

2.հոդվածի ծավալը՝ **3-5 լրիվ էջ (ներառյալ աղյուսակներ, պրամագրեր):**

Տեքստի ձևաչափը՝ A4 ֆորմատի թուղթ (210x297 մմ), MS Word 2007, տառատեսակը՝ GHEA Grapalat (հայերեն), Times New Roman (ռուսերեն և անգլերեն), տառաչափը՝ 12, տեքստը՝ էջի լայնությամբ հավասարեցված, առանց տողադարձերի:

Միջտողային տարածությունը՝ 1, էջի յուրաքանչյուր կողմից 2 սմ լուսանցք:

Տեքստի կառուցվածքը

- **Առանցքային բառեր:**

- **Հետազոտության արդիականություն.**

ներառում է հիմնախնդրի ուսումնասիրության կարևորությունը, վիճակը և դրա արտացոլումը գրական աղբյուրներում:

- **Հետազոտության նպատակը, խնդիրները:**

- **Հետազոտության մեթոդները և կազմակերպումը.**

նշվում են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները՝ մեկ տողով, օգտագործված սարքեր, քանակակազմ, հետազոտության կազմակերպում (վայրը, տևողությունը, ժամանակահատվածը):

- **Հետազոտության արդյունքների վերլուծություն.**

ներկայացվում են և վերլուծվում հետազոտության արդյունքում ստացված տվյալները, փաստերը, տրվում աղյուսակներ և տրամագրեր՝ խիստ անհրաժեշտության դեպքում (ընդհանուր՝ 2-ից ոչ ավելի):

- **Եզրակացություն.**

ներկայացվում են հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կատարված եզրահանգումները՝ չկրկնելով հոդվածի այլ բաժիններում տրված ձևակերպումները (կարելի է ներկայացնել նաև առաջարկություններ):

- **Գրականություն.**

ըստ այբբենական կարգի՝ համարակալված ներկայացվում է 3-5 գրական աղբյուր: Սկզբից տրվում են հոդվածի լեզվով աղբյուրները, որից հետո՝ օտարալեզու: Հղումները տեքստում կատարվում են քառակուսի փակագծերում՝ նշելով գրականության աղբյուրի հերթական համարը, օրինակ՝ [2] կամ [1,3]:

Լավագույն աշխատանքները հրատարակվելու են «Սպորտ, առողջություն, կրթություն» ուսանողական գիտական տարեգրքում:

Նյութերը ներկայացնել մինչև ապրիլի 30-ը՝ էլեկտրոնային և 1 օրինակ փպագիր փարբերակով՝ հեփկյալ հասցեով՝

Երևան 0070, Ալեք Մանուկյան 11, 2-րդ հարկ՝ Գիտահամակարգող բաժին, հեռախոսներ՝ (010) 55-33-10 (ներքին՝ 1-64), 093.36.89.19 Երանուհի Սիմոնյան, էլ. հասցե՝ Eranuhi.Simonyan@sportedu.am

Ձևակերպման օրինակ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՒՑՔԱՄԱՐՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐՏԱՈՃԵՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

ՄՄ ֆակուլտետ, Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոն, 4-րդ կուրս, Միսակ Սարգսյան, Գիտական ղեկավար՝ մ.գ.թ., ասիստենտ Ա. Շախյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Յու.Գ., Չատինյան Ա.Ա., Կարապետյան Ի.Բ., Ֆիզիկական կուլտուրայի անհրաժեշտությունն ուսանողների տեսանկյունից,

Հանրապետական 29-րդ գիտամեթոդական կոնֆերանսի թեզիսներ, Երևան, 2002, էջ 15:

2. Ղազարյան Ֆ. Գ., Սպորտային պատրաստության հիմունքները, Դասագիրք, Երևան, Ջոքեր հրատ., 1993, 212 էջ:
3. Терехина Р.Н., Уровень специальной подготовленности лидеров гимнастического помоста в первый год олимпийского цикла / Р.Н. Терехина, С.В. Борсиенко, Н.Н. Коврижных // Ученые записки университета имени П. Ф. Лесгафта. – 2017. – № 10 (152). – С. 244-248.
4. Dowling M., Edwards J. & Washington M., Understanding the Concept of Professionalisation in Sport Management Research, Sport Management Review, 2014; 17(4)p. 520–529.
5. http://media.miu.by/files/store/items/lifelong/11/11_life_long_learning_5_10.pdf